

ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

ԱԼՎԱՐԴ ՔԻԼԱՐՋՅԱՆ

Վահան Թեքեյանի չափածոն առանձնանում է ձևի հղկվածությամբ ու նրբությամբ¹:

Թեքեյանի քնարական հերոսը աշխարհի ու մարդկանց հետ հաղորդակցվում է անկրկնելի բանաստեղծական լեզվով, որ միայն իրենն է, իր գոյության կերպը, բուն գոյավիճակը: Բանաստեղծական լեզուն, աշխարհի, մարդկանց, սեփական անձի հետ հաղորդակցվելու միջոց լինելուց բացի, նաև բանալի է, որով ստեղծագործողը փակ դռներ է բացում, նոր դռանցներ է հնչեցնում՝ հոգիների համար պարզելով հրապուրիչ հորիզոնների լայնություններ, որտեղ նրանք նորից են ծնվում՝ վայելելու անփոխարինելի հրճվանքներ, լսելու չլսված մեղեդիներ, ապրելու չապրված կարոտներ, շլանալու դեռ չծիածանված գույներով, դեռ չճաշակած բույրերով: Բանաստեղծական լեզուն արարողի հրաշքն է²:

Գեղարվեստական խոսքում ոճական դարձույթների գործածությունը խոսում է տվյալ հեղինակի լեզվական հմտության մասին: Գեղարվեստական գրականության լեզուն անհատականացված ու տիպականացված է և միաժամանակ ունի ընդհանրացումներ կատարելու անսպառ հնարավորություններ: Տարբերվելով զգացմունքայնությամբ, հուզականությամբ՝ գեղարվեստական գրականության լեզուն պատկերավորման համակարգի և արտահայտչամիջոցների շնորհիվ վեր է հանում լեզվի յուրահատկությունները, նրա ճկունությունը, բառապաշարի հարստությունը, քերականական ձևերի կատարելությունը, պատկերավորությունը, բացահայտում մտքի ու հոգու ամենանուրբ ելևէջներն ու թրթռումները: Տաղանդավոր գրողները խոր հետք են թողնում լեզվի զարգացման ճանապարհին, քանի որ շրջանառության մեջ են դնում նոր ոճեր, արտահայտություններ, կերտում նոր բառեր, իրենց ստեղծագործություններով նպաստում լեզվի հարստացմանն ու կատարելագործմանը: Թեև գե-

¹ www.anunner.com/name/biographi/ՎԱՀԱՆ-ԹԵՔԵՅԱՆ-ԳԱԼՈՒՍՏԻ?lang=en www.anunner.com/name/biographi/VAHAN-TEQEYAN-GALUSTI?lang=en.

² Տե՛ս Վահան Թեքեյանի 125-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2004, էջ 14: Tes, Vahan Teqeyani 125- amyakin nvirvats gitajoghovi zekutsumner, Erevan 2004, ej 14:

ղարվեստական լեզուն միատարր չէ, այնուհանդերձ գեղարվեստական գրականության լեզուն արտահայտվում է ինքնատիպ ձևով՝ զգացմունքների ու լեզվի յուրահատուկ ներդաշնակությամբ, յուրօրինակ գեղարվեստական պատկերներով: Լեզվի պատկերավորման հիմքում ընկած է բառի փոխաբերական գործածությունը: Երբ բառիմաստը գործածվում է այլ երևույթների փոխարեն, ստանում ենք փոխաբերական նշանակություն: Փոխաբերության մեջ առկա է երկու երևույթների սեղմ համեմատությունը: Ընթերցողն ինքը պետք է բացահայտի դրանց ներքին կապերն ու նմանությունները. այդ երևույթները բացահայտորեն չեն տրվում:

Փոխաբերությունը նշանակության փոխանցում է ըստ նմանության: Իմաստային երկու իրողությունների միջև եղած կապը ենթադրում է մի որևէ ընդհանուր իմաստային տարրի՝ կապակցող միավորիչ իմաստությի առկայություն, այդ նշանակությունների տիրույթի մնացած մասը զբաղեցնում են տարբերակիչ իմաստությունները: Հենց ընդհանուր իմաստությի՝ նշանակության կերպարանափոխումն իրականացնող ուղու միջոցով գիտակցության մեջ միասնական, հաճախ անսպասելի համակարգվում են սկզբնական և վերջնափին, բուն և փոխաբերական նշանակությունները³:

Վահան Թեքեյանի լեզուն արևմտահայ գրական լեզվի զարգացման ամենափայլուն նմուշներից է: Նրա փոխաբերություններում խտացված են հեղինակի հոգեկան դրամայի տիպական գծերը: Օրինակ.

Բայց տրվածդ էր իմ ցուրտիս, մութիս դէմ

Յանկարծ ա՛յնպես լուսաւոր, ա՛յնքան սրտով, հոգւով լի

Որ մոխիրէն իմ սրտիս թռաւ այս բո՛ցը վըսեմ... (62)⁴:

Որպես լեզվական պատկերավորման միջոց՝ փոխաբերությունը բնորոշ է բանաստեղծական անձնավորմանը, որով մարմնավորվում են հոգեկան բարդ, անըմբռնելի երևույթները, պատկերվող դեպքերին, երևույթներին, գործողություններին, աներևույթ առարկաներին հեղինակը վերագրում է մարդկային այս կամ այն հատկանիշը: Օրինակ.

Արաքսն իր պորտը քեզմէ կտրած կ'երթա՛յ, կը վազե՛

³ Տե՛ս Աթայան Է., Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, 1981: Tes E. R. Atayan, Lezvakan ashxarhi nerqin kerpavorumy ev artaqin veraberutyuny, Erevan, 1981:

⁴ Այս և մյուս օրինակները բերված են հետևյալ գրքից՝ Վահան Թեքեյան, բանաստեղծություններու հատընտիր, Երեւան, 2012: Ays ev myus orinaknery bervats en hetevyal grqic Vahan Teqeean, banasteghutunerneru hatyntir, Erevan, 2012:

*Հայ աշխարհին մեջտեղէն, զայն երգերով կը լընու,
Զայն կ'ողողէ բերքերով, մերթ կը գոռա՛յ ահարկու,
Եւ մերթ ուրախ ու թեթեւ կը ցափկէ վա՛ր ժայռերէ...(158):*

Պատկերավորման այս երկու միջոցները բացահայտում են իրերի հոգին, դրանց շարժումն ու խոսքը: Օրինակ.

*Պէտք ունինք որ՝ մեր անունն ալ սաւառնաթեւ
Երկրէ երկիր թռչի երթայ(53):*

Իբրև պատկերավորման միջոց՝ փոխաբերությունը ձգտում է կերպարի ճկունության, հոգու ներքին կենսունակության: Նրա հյուսվածքում ամեն անգամ փոխաբերություններ են ծնվում՝ արտահայտելով միմյանցից բոլորովին տարբեր վիճակներ: Եվ դա է նրա արվեստի հարստությունն է: Օրինակ.

*Զի ինչ որ ես ըզգացի եւ, ա՛հ, չըսի վաւորեն,
Ծով մ'էր անհուն հեշտութեան, որ գրկեց սիրտս ու փարաւ
Ու զայն խեղդեց ու հիմա անոր դագաղն է անբաւ...(74)
Այդքա՛ն անոյշ ջերմութիւն՝ նայուածքիդ մէջ ու ժպտիդ,
Ու հասակիդ մէջ այդքա՛ն լեցուն, ճըկուն ճոխութիւն,
Մորթիդ խաւար բուրումին, ծայնիդ շեշտին հետ վըճիտ՝
Զիս կը խեղդեն հեշտութեան աւազներու փակ ծըփուն...(59):*

Մարդկային հոգեվիճակները՝ վիատությունից մինչև հույս և դառնությունից մինչև բերկրանք, շնորհիվ փոխաբերության, դառնում են տեսանելի, նույնիսկ՝ շոշափելի: Օրինակ.

*-Պէտք է որ **Յոյսը** մափաղ
Ձեր սրտին մեջ ալ փղա՛ք,
Ձեզի համար ու մեզի,
Ամէն, ամէ՛ն երկնի փակ
Յաւերժաբար **բողբոջի**...(118):
Ուրիշ ամէն բան ժանգ է հոգւոյն համար, որ պղինձ՝
Ծիծաղին խիստ շըփումով կը մաքրուի, կը փայլի...(207):
Կը նստի՛ գիշերն ու ահեղօրէն
Զափուած՝ ան կ'երթայ, ամբոխէն հեռու,
Մենութեան սառին մէջ թաթխըվելու(136):*

Փոխաբերությունը հասկացության արտահայտումն է պատկերավոր եղանակով, գեղարվեստական մտածողության յուրահատկությունների դրսևավորմամբ:

Լեզուն մի համակարգ է, որը նախորդից ընտրում է իր իմաստաբանական աշխարհը և այն բաշխում իր նշանակողների միջև. դրանով պահպանում ու որոշակիացնում է փոխաբերական գործածությունների՝ նախորդ մակարդակում պարունակվող հնարավորությունների մի մասը: Լեզուն յուրովի բեկում է նախորդ մակարդակը և անմիջականորեն ընկած է անհատի խոսքի՝ ոճականորեն սահմանվող կիրառական հնարավորությունների հիմքում, որոնց թվին են պատկանում նաև փոխաբերական գործածությունների հնարավորությունները⁵:

Փոխաբերությունները խոսքում բառի ոչ բառացի գործածության ուղիներն են:

Փոխաբերությունը մտքի ու ճանաչողության շարժման ու զարգացման մայրուղիներից մեկն է:

Ըստ Պոտեբնյայի՝ փոխաբերական և բուն իմաստների միջև գոյություն ունի նշանային հարաբերություն. փոխաբերական իմաստը բուն իմաստի նշանն է: Փոխաբերական ներունակ միավորիչ իմաստույթը նմանության, զուգաձևության իմաստույթ է⁶:

Բանաստեղծական խոսքի և փոխաբերության կապի բնութագիրն առավել ամբողջական դարձնելու համար հարկ ենք համարում քննության առնել փոխաբերության կապը այլաբերության մյուս տիպերի հետ, հատկապես համեմատության հետ: Փոխաբերությունը, ի տարբերություն համեմատության, ցույց է տալիս մի առարկայի կայուն նմանությունը մյուսին: Այդ պատճառով էլ փոխաբերությանը բնորոշ չէ տեղով և ժամանակով սահմանափակումը: Փոխաբերությունը կրճատում է խոսքը, իսկ համեմատությունը՝ ընդլայնում: Փոխաբերությունը երկանդամ է, իսկ համեմատությունը՝ եռանդամ: Համեմատությունները երբեմն կարելի է շփոթել փոխաբերությունների հետ, քանի որ երկուսն էլ կառուցված են նմանության սկզբունքով: Փոխաբերությունը բառի գործածությունն է մեկ այլ բառի իմաստով՝ հենվելով երկու երևույթների նմանության վրա⁷: Սակայն փոխաբերության մեջ համեմատվող անդամը փոխարինվում է այլաբանական իմաստ ստացած բառով: Համեմատությունն ընդ-

⁵ Տե՛ս Աթայան Է., Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, 1981, էջ 269: Tes E. Atayan, Lezvakan ashxarhi nerqin kerpavorumy ev artaqin veraberutyuny, Erevan, 1981, ej 269:

⁶ Потебня А.А. Из записок по русской грамматике, М. 1958, с. 17.

⁷ Տե՛ս Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, 1989, էջ 71: Tes Eloyan S., Djamanakits hayereni barayin ojabanutyu, 1989, ej 71:

հանրապես շեշտում, ընդգծում է պատկերվող երևույթի, առարկայի ամենից բնորոշ հատկանիշը: Թեքեյանի ստեղծագործություններում համեմատություններն ու փոխաբերություններն արտահայտչական մեծ նշանակություն ունեն: Նրա քնարերգության մեջ բառերը հիմնականում հանդես են գալիս զգացմունքային երանգով: Այդպիսի բազում օրինակներ կան Թեքեյանի անտիպ գործերում.

*Իբր աղբիւրէ մը կցուած
ժայթքէ՛ր համբոյրըդ յանկարծ*

Փընէ՛ր իր շենքը վըրաս...⁸

Փոխ եթե այսքան սէր թափէր

Անձրեւի տեղ ժայռին վրայ

Մինչև անգամ ժայռն հիմա

Կը բուսցընէր ծաղիկներ...⁹

Եւ լուսասփիտ դաշտերուդ սա՛ կանանչ քողն է ցորեն (151):

Գտնել բնական փոխաբերություններ նշանակում է կարողանալ բնության մեջ նկատել առարկաների նմանությունը: Վահան Թեքեյանը մեծ վարպետությամբ բնության երևույթների միջոցով հրաշալի փոխաբերություններ է ստեղծում: Օրինակ.

Բնութիւնը հայելի մ' է սոսկ, որուն

Կեանքի պատրանք կուտայ մեր կեանքին,

Փոթորկորպ ծոցը պատկերն է մեր սըրտին,

Որ կը կռի յար դէմն իր նեղ ավերուն

Եւ մեր սրտէն է, որ կ'առնէ փոխ գարուն

Ամբողջ թովքը վարդերուն ու սոխակին,

Այգուն հմայքն, արեգին ալ հուր ոսկին

Տժգույն ցոլքերն են մեր սրտին յոյզերուն (Անտիպ-ԳԱԹ-ՎԹՖ, թիվ 24,

էջ 3):

Ճամփուն եզերքը մանուշակն արդեն

Քեզի կը կանչէ:

-Եկո՛ւր, մրմունջը լուսե առուակին

⁸ Անտիպ գործեր, Մամուլի մէջ տպուած եւ անտիպ երկեր ու նամականի Վահան Թեքեյանին-Պեյրութ, 1987, էջ 123: Antip gortser, Mamuli mej tpuats ev antip erker u namakani Vahan Teqeeaneni- Peyrut, 1987, ej 123:

⁹ Նույն տեղում, էջ 128: Nuyt teghum, ej 128:

Անուշ խոսքերով

Պիպի ամոքէ քո մըռայլ հոգին

Քու հոգին խըռով (Անպիպ-122):

Ծառի թեթև ծաղիկներ՝ սալորենտ՝, նըշենտյ,

Նման էիք դուք սիրոյս ծաղիկներուն՝ որ յանկարծ

Կը բացուէին երազի երկընքին մէջ ու յեպոյ

Կը թափէին, մի առ մի, վերէն՝ գետնին վըրայ ցած... (94):

Փոխաբերության գործառնություններն են՝ պատկերավոր մտածողության ստեղծում, անվանողական գործառնությ, մտածողությունը ձևավորող գործառնությ, խոսքին պարզություն ու հասկանալիություն հաղորդելու գործառնությ, խոսքին սեղմություն հաղորդելու գործառնությ: Վերջինս ունի լեզվական խնայողության գործառնությ, որը պահանջում է գործածման հմտություն: Փոխաբերության գործառնությունը կապվում է կարևորագույն նպատակների հետ՝ իմացաբանական և պատկերաստեղծ: Փոխաբերությունը հենց լեզվի գործառնությունն է: Բացի պատկերաստեղծ միջոց լինելուց՝ փոխաբերությունը հիմնարար կառուցողական դեր ունի մեր մտածողության դաշտում հասկացական նոր համակարգեր ձևավորելու գործում: Փոխաբերությունը ոչ թե իմաստի կրողն է, այլ դրա ձևավորման միջոցը:

Փոխաբերությունն առաջնային տեղ և ոճաստեղծ դեր ունի Վահան Թեքեյանի չափածոյում: Վահան Թեքեյանը պատկերավորության իսկական վարպետ է: Սովորական բառերն ու արտահայտությունները նրա գրչի տակ դառնում են շնչող ու անփոխարինելի: Պատկերավորության բազմաթիվ միջոցներն իրենց զանազան արտահայտություններով ու ինքնատիպ ձևերով մի առանձնակի փայլ են տալիս նրա չափածոյին:

Պատկերավոր արտահայտչամիջոցների կիրառումը ենթադրում է ընթերցողի մտքերի և զգացմունքների վրա գեղագիտական ներազդեցություն. հեղինակի նպատակն է գեղագիտորեն ներազդել ընթերցողի վրա. ընթերցողը պետք է մտնի հեղինակի մտահղացումների աշխարհը և որսա նրա ասույթի իմաստը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Փոխաբերությունը պատկերաստեղծ միջոց լինելուց բացի, հիմնարար կառուցողական դեր ունի մեր մտածողության դաշտում հասկացական նոր

համակարգեր ձևավորելու գործում: Փոխաբերությունն առաջնային տեղ և ոճաստեղծ դեր ունի Վահան Թեքեյանի չափածոյում:

Բանալի բաներ - փոխաբերություն, գեղարվեստական գրականության լեզու, ոճ, ստեղծագործություն, պատկերավորում, համեմատություն, գործառույթ:

МЕТАФОРА В СТИХАХ ВАГАНА ТЕКЕЯНА

АЛВАРД КИЛАРДЖЯН

Помимо того, что метафора является средством создания образа, она играет фундаментально-конструктивную роль в нашем мышлении при формировании новых концептуальных систем. Метафора играет первостепенную и стилиобразующую роль в стихах Вагана Текеяна.

Ключевые слова - метафора, язык художественной литературы, стиль, произведение, иллюстрация, сравнение, функция.

THE METAPHOR IN VAHAN TEQEYAN'S VERSE

ALVARD QILARJYAN

The use of metaphor is a means of creating images and has a fundamental role in our thinking, which can engender a new way of awareness and understanding. In Vahan Teqeyan's verse, metaphor is a prerogative and has a part in defining his style.

Key words - metaphor, the language of art literature, style, creation, illustration, comparison, function.